

## Մկրտիչ Արմեն

### Մենավոր մարդկանց մասին

#### 1

Տափաստանները ձգվում են մինչև հորիզոնը և շրջապատը լայնարձակ է ու հարթ: Շրջապատում ոչինչ չի երևում՝ բացի երկնքից, որ հորիզոնի բոլոր կողմերում միանում է երկրի հետ, և բացի հարթ դաշտավայրից, որը չունի ոչ մի խորդուբորդություն ու հասնում է մինչև հորիզոնը, անցնում է դրանից էլ հեռու...

Այդ անծայր կանաչ տափաստանում տեղ-տեղ երևում են պուրակներ, որոնց մոտ գյուղեր են: Սպիտակ սվաղած փոքրիկ տնակներ կան այդ գյուղերում և յուրաքանչյուր տնակի առջև փոքրիկ պարտեզ կա, որտեղ ծառեր կան և խոտ ու ծաղիկներ են բուսնում:

Բայց տափաստանի շատ վայրերում նույնիսկ այդ գյուղերն էլ չկան և երկաթուղին է միայն, որ ձգվում է անսպի դաշտավայրով: Այդպես անցնում են բազմաթիվ վերստեր և չկա կարծես բնակչության ոչ մի հետք:

Սակայն բոլորովին ամայի չէ այդտեղ հարթավայրը: Երկաթուղագծի կողքին, յուրաքանչյուր մի քանի վերստը մեկ, կան փոքրիկ, միանման տնակներ, որոնց շուրջը կան մի քանի միանման ծառեր:

Այդ տնակներում ապրում են մարդիկ, որոնք ունեն միանման աշխատանք: Այդ տնակները գծապահների տնակներն են: Այնտեղ ապրողը պարտավոր է մաքրել երկաթուղագիծը՝ տնակից մի կողմ և մյուս կողմ՝ մինչև հարևան տնակներն ընկած տարածության կեսը: Մյուս տնակում ապրողն էլ՝ նույնը, և այդպես շարունակ: Ամսական մի անգամ քաղաք են գնում նրանք կամ մոտակա կայարանը՝ ռոճիկ ստանալու և մթերք գնելու համար:

Այդ տնակներից յուրաքանչյուրում ապրում է մի ծերուկ կամ մի պառավ, կամ թե մի մարդ իր կնոջ՝ և ամենաշատը՝ մի երեխայի հետ:

Մենավոր տնակներ են դրանք՝ մենավոր մարդկանցով...

#### 2

Գծապահի մի տնակ կար: Այնտեղ ապրում էին՝ տղամարդը, որ քառասուն տարեկան էր, հինգ տարով ավելի փոքր նրա կինը և վեց տարեկան երեխան:

Հայրն ամեն առավոտ ստուգում և մաքրում էր գնացքի գիծը, իսկ հետո զբաղվում էր տնային աշխատանքներով: Մայրը ճաշ էր եփում, շորեր էր կարկատում և երբեմն էլ, շաբաթական մի անգամ, լվացք էր անում:

Իսկ ի՞նչ ուներ անելու երեխան: Նրա շրջապատում միայն տափաստանն էր և երկու ռելսերն էին, որոնց մի զույգ ծայրերը հորիզոնի մի կողմումն էին անհետանում, իսկ մյուս զույգը՝ մյուս կողմում: Միայն ավագ կար շրջապատում, որ պետք էր գալիս շապիկների վրա լցնելու համար, և ավագից էլ շատ հող կար:

Բակում յոթ-ութ ծառեր կային, իսկ պատի տակ կար արևի առատ լույս ու տաքություն և ավագը շատ էր այնտեղ: Երեխան նստում էր փոքրիկ բակում, պատի տակ, և խաղում էր ավագի հետ:

Այդպես անցնում էին իրար նման օրերը:

Հաճախ պատահում էր, որ երեխայի ծնողները գնում էին մյուս տնակում ապրողների մոտ, իսկ նրան թողնում էին տանը: Ծնողները միշտ գնում էին դեպի հարավ, իսկ դեպի հյուսիս չէին գնում, որովհետև այն կողմի դրկիցը մի մռայլ և մարդախույս ծերուկ էր:

Երեխան, որի անունը Վոլոդյա էր, այդպիսի դեպքերում էլի նստում էր պատի տակ, էլի խաղում էր ավազի հետ, իսկ երբ ձանձրանում էր, գալիս նստում էր ռելսերի կողքին և նայում էր:

— Ո՛ւր են ձգվում ռելսերը...

Մի օր, երբ Վոլոդյայի ծնողները տանն էին, մյուս տնակի բնակիչներն իրենք եկան նրանց մոտ: Մարդ ու կին էին և մեկ էլ նրանց փոքրիկ աղջիկը: Վոլոդյան տեսավ աղջկան, կանչեց իր մոտ, և նրանք սկսեցին խաղալ միասին: Վոլոդյան առաջին անգամն էր խաղ անում ուրիշի հետ միասին: Հետո նրանք դուրս ելան երկուսով և շարունակեցին խաղալ ավազի վրա:

Այնքան ուրախ երեխա էր Աննան...

Երբ ծնողները գնացին և Աննան էլ գնաց, Վոլոդյան նորից մենակ մնաց ու նրա փոքրիկ գլուխն սկսեց մտածել:

— Ի՛նչ վատ բան է մենակությունը...

### 3

Էլի օրեր անցան:

Վոլոդյան Աննային կարոտեց, շատ կարոտեց: Եվ որովհետև գիտեր նրանց տնակը, դրա համար էլ երկաթագծերի մեջտեղով ուղիղ գնաց այնտեղ: Հասավ, մոտեցավ լուսամուտին և կանչեց.

— Աննա՛, եկ խաղ անենք...

Ծնողներն զգացին Վոլոդյայի բացակայությունը և երբ Աննայենց տնակի մոտ, Աննայի հետ խաղ անելիս գտան նրան, ոչինչ չասացին և ծիծաղեցին՝ հանգիստ շունչ քաշելով: Վոլոդյան սկսեց հաճախել այնտեղ:

Իհարկե, լավ բան չէ մենակությունը...

Այնուհետև հաճախ Աննան ինքն էլ էր գալիս Վոլոդյայի մոտ և խաղ էին անում, իսկ ծնողները գնում էին մյուս տնակը՝ զրույց անելու և քարտ խաղալու համար:

### 4

Ձմեռ էր: Էլի Վոլոդյան մենակ էր, և էլի ծնողները տանը չէին: Մայրը պատվիրել էր նրան՝ դուրս չգնալ և չմիսել: Վոլոդյան դուրս չէր գնում և չէր միսում: Միայն թե ներսում, մենակության մեջ, շատ ձանձրալի էր:

Հանկարծ դրսից լսվեց մի ձայն.

— Վո՛լո՛դյա՛ ...

Վոլոդյան ուրախ դուրս նայեց լուսամուտից: Աննան էր: Իսկույն վազեց ընդառաջ: Ի՛նչ լավ եղավ, որ եկավ Աննան:

Նրանք սկսեցին թերթել վագոնների պատկերազարդ գիրքը: Բուքը ոռնում էր և քամին էր վազվզում դրսում:

— Աննա, դու ինչպե՞ս եկար...

Քամին էր վազվզում դրսում, իսկ ձյունն անվերջ գալիս էր:

— Ապրես, Աննա, դու քաջ ես...

Ձյունն անվերջ գալիս էր և ծածկում երկաթուղագիծը...

— Աննա, վաղը ես ինքս կգամ քեզ մոտ, որ դու ճանապարհին չմոտես:

Ձյունը ծածկում էր երկաթուղագիծը, ամբողջ տափաստանը, արծաթագույն ռելիեֆը:

Երեկոն իջնում էր վար:

— Ո՛ւ...— լավեց հեռվից, բայց դա գնացքի ձայնը չէր: Դա գայլն էր մոտենում տնակին: Երևի շատ հեռվից էր եկել և մեծ ախորժակով:

— Վոլոդյա, ո՞վ է դուռը չանգռում...

— Ոչ ոք: Ճիշտ եմ ասում, դա բուքն է խփում պատերին:

— Ոչ, չանգռում են, Վոլոդյա...

Վոլոդյան էլ գիտեր, որ գայլն էր դա: Վոլոդյան ինքն էլ էր վախենում, բայց սիրտ էր տալիս թե՛ Աննային, թե՛ իրեն:

Գայլը չանգռում էր կատաղի ու ոռնում: Աննան էլ իմացավ, որ գայլն էր դա: «Երևի նա արդեն քանդում է դուռը»,— մտածեց նա ու սեղմվեց Վոլոդյային: Վոլոդյան գրկեց նրան, և նրանք մնացին այդպես, դողալով վախից:

Յեռվից, շատ հեռվից, լավեց մի նոր ձայն:

— Ո՛ւ... Դա արդեն գնացքն էր մոտենում: Վոլոդյան էլ, Աննան էլ, ձայնից ճանաչեցին նրան: Երանի իրենք էլ լինեին այդ գնացքի մեջ: Կսլանային հեռո՛ւ, հեռո՛ւ, և գայլը թող չանգռեր դատարկ սենյակի դուռը. . .

Գնացքն անցավ շրխկալով: Վոլոդյան ու Աննան տնակի լուսամուտներից տեսան վագոնի լուսավոր ապակիները: Շոգեկառքը սուլում էր դեռ, երբ գնացքն անցավ:

Երբ գնացքն անցավ, ու սուլոցը դադարեց, դռան մոտ այլևս գայլ չէր ոռնում: Գնացքը փախցրել էր նրան:

Այդ օրվանից Վոլոդյան ու Աննան ավելի սիրեցին գնացքը, սիրեցին այն վայրը, որտեղից գալիս էր նա, և այն վայրը, ուր գնում էր և որտեղ չէր եղել նրանցից ոչ մեկը:

## 5

Արա՛գ, արա՛գ, արա՛գ...

Կյանքը սահում է, ամեն ինչ փոխվում է: Կանաչ ծառերը չորանում են և նրանց տեղ նորերն են մեծանում: Աշնանը թափվում են տերևները, իսկ մյուս գարնան նրանք կանաչում են նորից: Ծաղիկները մեռնում են և ուրիշ-ուրիշ ծաղիկներ են բուսնում:

Աճում են մարդիկ, գյուղեր, քաղաքներ... Այդպես աճում ու մեծանում են նաև մենավոր մարդիկ:

Երբ Վոլոդյան ու Աննան մեծացան, նրանք ուզեցին ամուսնանալ իրար հետ: Եվ որովհետև երկուսի էլ ծնողները զձապահներ էին և մտերիմներ, դրա համար էլ ուրախացան:

Նրանք ամուսնացան:

Մի օր էլ, երբ գնացքը եկավ ու դանդաղեցրեց իր ընթացքը տնակների մոտ, Վոլոդյան ու Աննան մնաս բարև ասացին իրենց ծնողներին, համբուրվեցին նրանց հետ, նստեցին գնացք և գնացին...

Նրանք գնացին ձուլվելու իրենց միլիոնավոր ընկերների, միլիոնավոր եղբայրների քույրերի հետ:

Անիվները թակթակում էին, գնացքը սլանում էր: Գծի կողքին մերթ-մերթ երևում էին փոքրիկ լույսեր:

Գձապահ տնակների կրակներն էին դրանք: